ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.01.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/54

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի 29.12.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/54 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 29.12.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով և 12.01.2018թ. ի լրումն բողոքի հայտնել է, որ մասնակցվել մասնակցել է Սիսիանի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ՍՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) :

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 2-րդ կետի 2.5 ենթակետի համաձայն՝ Մասնակցին ներկայացվող «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը)

գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում սննդի ապրանքների մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ըստ «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի 25.12.2017թ. թիվ 2 արձանագրության թիվ 1.2 կետի՝ «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգին հայտեր են ներկայացրել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն և Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն:

Հիմք ընդունելով նույն արձանագրության 2.4 կետով Ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 1-35 և 38-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Սեյրան Առաքելյանին, իսկ 36 և 37 չափաբաժինների մասով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 29.12.2017թ. դիմում էր ներկայացրել «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին, որով խնդրել էր

անհապաղ տրամադրել 1-35 և 38 չափաբաժիններում հաղթող ճանաչված Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը:

Որակավորման փաստաթղթերը ուսումնասիրելու արդյունքում Ընկերության համար պարզ է դարձել, որ Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից չեն ներկայացվել համանման պայմանագրեր, ինչի մասին տեղյակ է պահվել պատվիրատուն:

Այնուհետև հարցը բարձրացնելուց հետո Ա/Ձ Սեյրան Առաքելյանը «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ որպես համանման պայմանագրեր ներկայացրել է թվով 4 պայմանագրեր, որոնցում առկա են բազմաթիվ բացթողումներ, որոնք չեն արձանագրվել պատվիրատուի կողմից, մասնավորապես՝

Ա/Ձ Սեյրան Առաքելյանի և «Բռնակոթի գյուղական համայնք ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի միջև 09.01.2017թ. կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում՝ բացակայում են հանձնման-ընդունման ակտը: Միևնույն ժամանակ վերը նշված պայմանագրի գինը կազմում է 300.000 դրամ, իսկ պայմանագրին կից ներկայացված հաշիվ-ապրանքագրում նշված է ընդամենը 1.600 դրամ /փաստացի բացակայում են պայմանագրի հաշիվ-ապրանքագրերը/:

Ա/Ձ Սեյրան Առաքելյանի և «ԱՍԲՍ» ՍՊԸ-ի միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրում առկա չէ ոչ հաշիվ-ապրանքագիր, ոչ էլ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող հրավերով պահանջվող ոչ մի փաստաթուղթ:

Ա/Ձ Սեյրան Առաքելյանի և Սեյրան Վլադիմիրի Առաքելյան Ֆ/Ա-ի միջև 01.08.2016թ.-ին կնքված տրանսպորտային միջոցի անհատույց օգտագործման պայմանագրի վերաբերյալ պետք է նշել, որ ներկայացված պայմանագիրը որևէ կապ չունի հրավերով նախատեսված՝ համանման պայմանագրի (սննդի ապրանքների մատակարարում) հետ, ուստի համանման համարվել չէր կարող:

Ա/Ձ Սեյրան Առաքելյանի և «САВ-ПРОЕКТ» ООО միջև 08.03.2017թ.-ին կնքված պայմանագրի վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ պայմանագրի 5.5 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը հավաստվում է կողմերի կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտով: Սակայն պայմանագրին կից Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից չի ներկայացվել կողմերի միջև

ստորագրված որևէ հանձնման-ընդունման ակտ: Տվյալ պայմանագրով Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացվել է ՌԴ դաշնությունում ընդունված հաշիվ-ապրանքագիր՝ բաղկացած հետևյալ փաթեթից. ИНВОЙС 1 13.03.2017г., СПЕЦИФИКАЦИА 01 13.03.2017г., УПАКОВОЧНЫЙ ЛИСТ от 13.03.2017г.:

Վերը նշված վերնագրով փաստաթղթերը ՌԴ օրենսդրության համաձայն հանդիսանում են հաշիվ-ապրանքագրերի անբաժանելի մաս կազմող փաստաթղթեր, սակայն Ընկերության կողմից ներկայացված վկայակոչված հաշիվ-ապրանքագրերում առկա են թերություններ, մասնավորապես՝

ИНВОЙС 1, СПЕЦИФИКАЦИА 01, УПАКОВОЧНЫЙ ЛИСТ փատաթղթերում նշված չէ, թե կոնկրետ որ պայմանագրի վերաբերյալ են դուրս գրվել փաստաթղթերը (բացակայում են տվյալ փաստաթղթերի հիմքում ընկած պայմանագրի ռեկվեզիտները), մասնավորապես СПЕЦИФИКАЦИА 01 պետք էր նշվեր պայմանագրի տվյալները և ИНВОЙС 1 տվյալները, ИНВОЙС 1 նույնպես չի պարունակում, թե որ պայմանագրի վերաբերյալ է այն դուրս գրվել, բացի այդ այն աստորագրված է միայն վաճառողի կողմից, իսկ գնորդի ստորագրությունը և կնիքը բացակայում է: Վերը նշված խնդիրները առկա են նաև УПАКОВОЧНЫЙ ЛИСТ փաստաթղթում:

Այսպիսով, հնարավոր չէ վստահաբար հավաստել, որ ИНВОЙС 1, СПЕЦИФИКАЦИА 01, УПАКОВОЧНЫЙ ЛИСТ փաստաթղթերը միանշանակ վերաբերում են Ա/Ձ Սեյրան Առաքելյանի և «САВ-ПРОЕКТ» ООО միջև 08.03.2017թ.-ին կնքված պայմանագրին:

Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական հիմքերը հետևյալն են՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն»:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան

հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Ամփոփելով, Ընկերությունը հայտնել է, որ նման փաստաթղթերի պայմաններում Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված պայմանագրերը չէին կարող դիտարկվել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համապատասխան:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստող փաստաթղթերը ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնահատելով՝ խախտել է Կարգի 61-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 2.5 կետի պահանջները:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է

1. Դադարեցնել «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի կողմից ներկայացրած հայտը մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և վերջինիս հաղթող ճանաչելու մասին որոշումները:

2. Պարտավորեցնել «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովին Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել այն:

3. Դադարեցնել «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովի Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 25.01.2018թ.-ին՝ ի լրումն 29.12.2017թ.-ին ներկայացված բողոքի, հայտնել է, որ Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագրի ուսումնասիրությունից երևում է, որ Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված հայտի ապահովման մեջ, մասնավորապես՝ վճարման պահանջագրի

երկրորդ «Ներկայացման ամսաթիվ» տողում դրվել է ներկայացման ամսաթիվ՝ 21.12.2017թ. (կցվում է):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնհատվում են անբավարար և մերժվում են»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ըստ հրավերի անբաժանելի մաս կազմող «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 2-րդ կետի՝ վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը, իսկ «ՆՈՒՀ ՀՈԱԿ»-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթով շահառու է հանդիսանում Սիսիանի համայնքապետարանը:

Մինչդեռ, Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից վճարման պահանջագրի երկրորդ «Ներկայացման ամսաթիվ» տողում դրվել է ամսաթիվ՝ 21.12.2017թ., ինչը հանդիսանում է հրավերի պահանջների խախտում, դարձնում վճարման պահանջագիրը անվավեր

փաստաթուղթ, իսկ դրա հետևանքով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի ուժով՝ Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված հայտը պետք է մերժվեր գնահատող հանձնաժողովի կողմից:

Խորհուրդը 08.01.2018թ. էլեկտրոնային փոստի միջոցով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ին և Սիսիանի համայնքապետարանին ծանուցել է ԳԲԽ-ԱՄ-2017/54 բողոքով 10.01.2018թ.-ին ժամը 11:00-ին կայանալիք նիստի վերաբերյալ:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 09.01.2018թ. գրությամբ Խորհրդին միջնորդել է 2 օրով հետաձգել 10.01.2018թ. ժամը 11:00-ին կայանալիք նիստը:

Խորհուրդը բավարարել է վերջինիս միջնորդությունը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.01.2018թ. ժամը 12:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 29.12.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով և 12.01.2018թ. ի լրումն բողոքի ներկայացված դիրքորոշումները:

2. <u>ՀՀ Սիսիանի համայնքապետարանի կողմից ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

ՀՀ Սիսիանի համայնքապետարանը 09.08.2018թ. թիվ 08 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին է ներկայացրել Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված 6, 6.1, 6.2, 6.3 հավելվածները՝ կից փաստաթղթերով:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված համանման պայմանագրերը հետևյալն են՝

1. 08.03.2017թ. կնքված պայմանագիր N 1, որի գումարային արժեքն է 542811 /հինգ հարյուր քառասուն երկու հազար ութ հարյուր տասնմեկ/ ՌԴ ռուբլի, որը կազմում է 4478190 /չորս միլիոն չորս հարյուր յոթանասունութ հազար մեկ հարյուր ինսուն/ ՀՀ դրամ,

2. 18.05.2017թ. կնքված պայմանագիր N 2, որի գումարային արժեքն է 313910 /երեք հարյուր տասներեք հազար ինը հարյուր տասը/ ՌԴ ռուբլի, որը կազմում է 2589757/ երկու միլիոն հինգ հարյուր ութանասունինը հազար յոթ հարյուր հիսունյոթ/ ՀՀ դրամ,

3. 23.01.2017թ. կնքված պայմանագիր N 1, որի գումարային արժեքն է 542024/ հինգ հարյուր քառասուն երկու հազար քսանչորս/ ՌԴ ռուբլի, որը կազմում է 4471698 /չորս միլիոն չորս հարյուր յոթանասունմեկ հազար վեց հարյուր ինսունութ/ ՀՀ դրամ,

4. 09.01.2017թ. կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը 300000/երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Պատվիրատուն հայտնել է, որ ընթացակագի 2.5-րդ կետի ա. ենթակետի պահանջների համաձայն՝ Ա/Ձ Սեյրան Առաքելյանի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «Մասնագիտական փորձառության» որակավորման չափանիշներին:

Պատվիրատուն հայտնել է, որ «ՍՄԱՔ-ԳՀԱՊՁԲ 18/1» մրցույթի շրջանակներում ներկայացված «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմում է 22 883 557.2 ՀՀ դրամ, իսկ Ա/Ձ Սեյրան Առաքելյանինը՝ 20 918 501 ՀՀ դրամ, 1 965 056 /մեկ միլիոն ինը հարյուր վաթսունհինգ հազար հիսունվեց/ ՀՀ դրամով ավելի ցածր է, քան «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ը, որը օգուտ է նաև Սիսիանի համայնքին:

«Սիսիանի Հաց» ՍՊԸ–ի կողմից բողոքով նշված այն փաստը, որ ընկերությունը բազմիցս պատվիրատուի մոտ բարձրաձայնել է Ա/Ձ Սեյրան Առաքելյանի ներկայացրած «Մասնագիտական փորձառության» որակավորման չափանիշների անհամապատասխանության մասին չի հանապատասխանում իրականությանը, քանի որ «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ն ընդամենը մեկ անգամ է գրություն ուղարկել պատվիրատուին՝ 29.12.2017 թվականին:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ 2017 թվականին մրցույթում հաղթող է ճանաչվել «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ն, ով անընդհատ խախտել է մրցույթի և պայմանագրի կատարման պահանջներն ու պայմաններն, ինչի համար բանավոր կարգով բազմիցս զգուշացվել է վերջինիս տնօրինությանը, սակայն «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ն չի վերացրել իր թերությունները, որի համար գրավոր ծանուցվել է: Ընկերությունը մինչ օրս էլ մատակարարումն իրականացնում է խախտումներով, դրանով իսկ անվստահություն առաջացնելով պատվիրատուի մոտ:

Պատվիրատուն ի լրումն 09.01.2018թ. գրության 16.01.2018թ. գրությամբ Խորհրդին է տրամադրել Ա/Ձ Սեյրան Առաքելյանի վերջին 3 տարիների ընթացքում կատարված և ավարտված պայմանագրերը՝ կից փաստաթղթերով (հաշիվ ապրանքագրերը, կնքված և հաստատված կողմերի միջև, արտահանման հարկային հայտարարագրերը և տեղեկանքներ՝ պայմանագրերի պատշաճ կատարման վերաբերյալ):

Պատվիրատուն հայտնել է, որ 09.01.2017 թվականին Ա/Ձ Սեյրան Առաքելյանի և «Բռնակոթի գյուղական համայնքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրով ներկայացված 1600 դրամի հաշիվ ապրանքագիրը, դա Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից մատակարարված հացի ընդամենը 1 օրվա հաշիվ ապրանքագիրն է՝ կից ներկայացնելով (հաշիվ ապրանքագրերը և «Բռնակոթի գյուղական համայնք ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի տնօրենի տրամադրված տեղեկանքը):

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ 18/1» ծածկագրով ընթացակարգի ժամանակ չի խախտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման կարգի պահանջները:

ՀՀ Սիսիանի համայնքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.01.2018թ. ժամը 12:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումները:

3. **<u>ԳԲԽ-ԱՄ-2017/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ԳԲԽ-ԱՄ-2017/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Սիսիանի համայնքապետարանի կողմից Սիսիանի համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների կարիքների համար սննդի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու

նպատակով հայտեր են ներկայացրել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն և Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն:

2. Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն հայտի N 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն հայտի թիվ 5 հավելվածով՝ Ընթացակարգի թիվ 1-38-րդ չափաբաժինների մասով, ներկայացրել է գնային առաջարկ, որի ***ընդհանուր արժեքը կազմել է 21 028 731 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.4 ենթակետով արձանագրել է, որ Ընթացակարգի թիվ 1-35-րդ և 38-րդ չափաբաժիններով նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել Ա/Ձ Սեյրան Առաքելյանը, իսկ 36 և 37-րդ չափաբաժինների մասով՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն:

5. Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն»-ը հիմնավորող փաստաթղթեր ներկայացվել են հետևյալը՝

- Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և «Սավ-Պրոյեկտ» ՍՊԸ-ի միջև 08.03.2017թ.-ին կնքված պանրի, հաճարի և լոբու մատակարարման թիվ 1 պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 4 461 907 ՀՀ դրամ:***
- Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և Ա/Ձ Ալեկսանդր Շաբանյանի միջև 18.05.2017թ.-ին կնքված պանրի մատակարարման թիվ 2 պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 2 668 235 ՀՀ դրամ:***
- Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և «Սավ-Պրոյեկտ» ՍՊԸ-ի միջև 23.01.2017թ.-ին կնքված պանրի, հաճարի և լոբու մատակարարման թիվ 1 պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 4 390 395 ՀՀ դրամ:***
- Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և «Բռնակոթիգյուղական համայնքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի միջև 19.01.2017թ. կնքված հացի առաքման ծառայության մատուցման պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 300 000 ՀՀ դրամ:***

6. Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն Հավելված 10-ին՝ տուժանքի մասին համաձայնագրին, կից ներկայացրած վճարման պահանջագրի «Ներկայացման ամսաթիվ» դաշտում նշել է՝ 21.12.2017թ.:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի 29.12.2017թ. բողոքը, ի լրումն բողոքի 12.01.2018թ. և 25.01.2018թ. ներկայացված գրությունները՝ կից նյութերով, ՀՀ Սիսիանի համայնքապետարանի 09.08.2018թ. թիվ 08 և 16.01.2018թ. գրությունները՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածը սահմանում է, որ՝

1. Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2. Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝*** պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Նույն օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ ***պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:*** Պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ՝ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. ***Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված փվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:***

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: ***Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային***

արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ***ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.***

4) ***մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:***

Ընթացակարգի հրավերի Մաս I-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ ~~սույն~~ ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում սննդի ապրանքների մատակարարված լինելը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում*** բացակայում է գնային առաջարկը կամ ***հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի Մաս I-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:*** Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընթացակարգի հրավերի Մաս I-ի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպես, ՀՀ Սիսիանի համայնքապետարանի կողմից Սիսիանի համայնքի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների կարիքների համար սննդի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն և Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն:

Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն հայտի N 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն հայտի թիվ 5 հավելվածով՝ Ընթացակարգի թիվ 1-38-րդ չափաբաժինների մասով, ներկայացրել է գնային առաջարկ, որի ***ընդհանուր արժեքը կազմել է 21 028 731 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.4 ենթակետով արձանագրել է, որ Ընթացակարգի թիվ 1-35-րդ և 38-րդ չափաբաժիններով նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել Ա/Ձ Սեյրան Առաքելյանը, իսկ 36 և 37-րդ չափաբաժինների մասով՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն:

Խորհուրդն արձանագրում է, որ Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն»-ը հիմնավորող փաստաթղթեր ներկայացվել են հետևյալը՝

1. Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և «Սավ-Պրոյեկտ» ՍՊԸ-ի միջև 08.03.2017թ.-ին կնքված պանրի, հաճարի և լոբու մատակարարման թիվ 1 պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 4 461 907 ՀՀ դրամ:***

- Արտահանման հարկային հայտարարագիրը՝ ***4 461 907 ՀՀ դրամ*** գումարի չափով:
- Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և «Սավ-Պրոյեկտ» ՍՊԸ-ի միջև 08.03.2017թ.-ին կնքված թիվ 1 պայմանագրի 28.04.2017թ. կատարման գրությունը, որի համաձայն՝ Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի կողմից պատշաճ կերպով կատարվել են պայմանագրային պարտավորությունները՝ պայմանագրի ընհանուր գումարի չափով:

2. Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և Ա/Ձ Ալեկսանդր Շաբանյանի միջև 18.05.2017թ.-ին կնքված պանրի մատակարարման թիվ 2 պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 2 668 235 ՀՀ դրամ:***

• Արտահանման հարկային հայտարարագիրը՝ ***2 668 235 ՀՀ դրամ*** գումարի չափով:

• Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և Ա/Ձ Ալեկսանդր Շաբանյանի միջև 18.05.2017թ.-ին կնքված թիվ 2 պայմանագրի 08.07.2017թ. կատարման գրությունը, որի համաձայն՝ Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի կողմից պատշաճ կերպով կատարվել են պայմանագրային պարտավորությունները՝ պայմանագրի ընհանուր գումարի չափով:

3. Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և «Սավ-Պրոյեկտ» ՍՊԸ-ի միջև 23.01.2017թ.-ին կնքված պանրի, հաճարի և լոբու մատակարարման թիվ 1 պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 4 390 395 ՀՀ դրամ:***

• Արտահանման հարկային հայտարարագիրը՝ ***4 390 395 ՀՀ դրամ*** գումարի չափով:

• Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և «Սավ-Պրոյեկտ» ՍՊԸ-ի միջև 23.01.2017թ.-ին կնքված թիվ 1 պայմանագրի 25.02.2017թ. կատարման գրությունը, որի համաձայն՝ Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի կողմից պատշաճ կերպով կատարվել են պայմանագրային պարտավորությունները՝ պայմանագրի ընհանուր գումարի չափով:

4. Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և «Բոնակոթիգյուղական համայնքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի միջև 19.01.2017թ. կնքված հացի առաքման ծառայության մատուցման պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 300 000 ՀՀ դրամ:***

• Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և «Բոնակոթիգյուղական համայնքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի միջև 19.01.2017թ. կնքված պայմանագրի հաշիվ-ապրանքագրերը՝ 275 700 ՀՀ դրամ գումարի չափով:

• Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի և «Բոնակոթիգյուղական համայնքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի միջև 19.01.2017թ. կնքված թիվ 1 պայմանագրի 29.12.2017թ. կատարման տեղեկանքը, որի համաձայն՝ Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն հացամթերքի ձեռքբերման նպատակով 09.01.2017թ. կնքված պայմանագրով իր ստանձնած պարտավորությունները կատարել է ամբողջությամբ՝ պահանջվածին համապատասխան: Բայց քանի որ եղել են դեպքեր երբ քիչ քանակությամբ հաց է պահանջվել Պատվիրատուի կողմից՝ երեխաների հաճախականության հետ կապված, այդ նպատակով էլեկտրոնային համակարգով դուրս

է գրվել 275 700 ՀՀ դրամ գումարի արտադրանքներ, ապրանքների առաքման հաշիվ ապրանքագրեր:

Այսպիսով, ամփոփելով վերը նշված փաստերը, Խորհուրդն արձանագրում է, որ սույն մասով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված փաստերն ու հիմնավորումներն անհիմն են և չեն համապատասխանում իրականությանը, քանի որ Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը բավարարում է Կարգի 61-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պահանջներին, ուստի Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն սույն մասով բավարար գնահատելով Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի հայտը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Ինչ վերաբերում է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից 25.01.2018թ. ի լրումն բողոքով ներկայացված այն դիտարկմանը, որ Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման մեջ, մասնավորապես՝ վճարման պահանջագրի «Ներկայացման ամսաթիվ» տողում դրվել է ներկայացման ամսաթիվ՝ 21.12.2017թ., որը հանգեցրել է Ընթացակարգի հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգ»-ի խախտման, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Ընթացակարգի հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» 2-րդ կետի համաձայն՝ ***ներկայացման ամսաթիվը պարտադիր լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը, մինչդեռ*** Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն Հավելված 10-ին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրած վճարման պահանջագրի «Ներկայացման ամսաթիվ» դաշտում նշել է՝ 21.12.2017թ.:

Ընթացակարգի ***հայտերի բացումը*** տեղի է ունեցել armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ***22.12.2017թ. ժամը 11:00-ին***:

Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն ՀՀ Սիսիանի համայնքապետարանին 25.12.2017թ. գրությամբ հայտնել է, որ Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն մասնակցելով «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգին վճարման պահանջագրում թույլ է տվել տեխնիկական սխալ, որի համար պարտավորվում է հայտի ապահովումը կատարել պահանջվածին համապատասխան՝ կից ներկայացնելով շտկված վճարման պահանջագիրը, որտեղ ներկայացման ամսաթիվ չի նշվել:

Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն Ընթացակարգի թիվ 1-35-րդ և 38-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, <u>բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,</u>*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսինքն այն դեպքերում, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, ***կամ <u>հայտի ապահովումը</u> ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա մասնակցին չի տրվում հայտում առկա նշված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն, այլ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի ուժով նման հայտը ենթակա է մերժման:***

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ Պատվիրատուն սույն մասով բավարար գնահատելով Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի հայտը գործել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, Կարգի 41-րդ կետի, Ընթացակարգի հրավերի Մաս Ի-ի 8-րդ կետի 8.2-րդ և 8.9-րդ ենթակետերի պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 29.12.2017թ. ներկայացված բողոքը բավարարել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ